

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՔԻՇՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆՐԱԶԵՆԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՍԱՐՔԵՐԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՆՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

24 սեպտեմբերի 2013թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության կառավարությանն առընթեր Նայասրանի Նանրապետության ոստիկանության պերի փեղակալ Ն. Նունանյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի նոյեմբերի 14-ին Քիշնեւում ստորագրված՝ Նրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքա-

րում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 2013 թվականի հուլիսի 10-ին սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հերազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Նրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Նամաձայնագիր) ստորագրվել է 2008 թվականի նոյեմբերի 14-ին՝ Քիշնետում:

Նայասարանի Նանրապետությունը Նամաձայնագիրն ստորագրել է վերապահումով, ըստ որի՝ Նամաձայնագրի 16-րդ հոդվածն ընդունվում է հետեւյալ խմբագրությամբ. «Կողմերի համաձայնությամբ սույն Նամաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Նամաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով եւ դրա անբաժանելի մասն է»:

2. Նամաձայնագրով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր) համագործակցությունն իրականացնելու են՝ ա) Կողմերի համագործակցության իրավական-պայմանագրային հենքի կատարելագործման եւ հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարի ոլորտում Կողմերի պետությունների օրենսդրության ներդաշնակեցմանը աջակցության, բ) հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարի համաձայնեցված ռազմավարության ու համարել միջոցների մշակման, գ) հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության հակազդման բնագավառում իրավասու մարմինների փոխգործակցության մեխանիզմների համակարգման եւ կատարելագործման, դ) հրազենի անօրինական

պարասպումանը եւ շրջանառությանը մասնակից անդրազգային հանցավոր խմբերի, դրանց առաջնորդների եւ մասնակիցների մասին տվյալների համապեղ բանկի ստեղծման, ե) հրազենի անօրինական պարասպուման եւ շրջանառության հակազդման հարցերի հետ կապված միջազգային կազմակերպություններում եւ միջազգային ֆորումներում փոխգործակցության եւ գ) հրազենի անօրինական պարասպուման եւ շրջանառության կանխման ուղղությամբ համապեղ եւ/կամ համաձայնեցված միջոցառումների անցկացման ուղղություններով:

3. Նամաձայնագրով Կողմերը համագործակցությունն իրականացնելու են՝ 1) տեղեկատվության փոխանակման, 2) օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման վերաբերյալ հարցումների կատարման, 3) համապեղ եւ/կամ համակարգված՝ պրոֆիլակտիկ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ծրագրման եւ իրականացման, այդ թվում՝ վերահսկվող մարակարարման մեթոդի օգտագործմամբ, 4) աշխատանքային փորձի փոխանակման, աշխատանքային հանդիպումների, խորհրդատվությունների, խորհրդակցությունների, գործնական կոնֆերանսների եւ սեմինարների անցկացման, 5) կադրերի պարասպուման եւ մասնագետների որակավորման բարձրացման գործում աջակցության, 6) փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով համապեղ գիտական հետազոտությունների անցկացման, 7) օրենսդրական եւ այլ նորմատիվ իրավական ակտերի, գիտական հետազոտությունների արդյունքների եւ մեթոդական հանձնարարականների փոխանակման ձեւերով:

4. Նամաձայնագրով Նայասպանի Նանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ հիմնական պարտավորությունները.

ա) Նայասպանի Նանրապետության իրավասու մարմինների միջոցով Կողմերի հետ իրականացնել համագործակցություն զենքի անօրինական պարասպուման եւ շրջանառության հետ կապված հանցագործությունների կանխարգելման, հայրնաբերման, խափանման եւ բացահայտման գործում,

բ) Կողմերի հետ համագործակցությունն իրականացնել Նամաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածներում սահմանված ուղղություններով եւ ձեւերով,

գ) փոխադարձ պայմանավորվածությունների հիման վրա օգտագործել վերահսկվող մարակարարման մեթոդը հրազենի անօրինական պարասպուման եւ շրջանառության հետ կապված հանցագործությունները խափանելու եւ

բացահայտելու, ինչպես նաև դրանց մասնակից անձանց հայտնաբերելու նպատակով,

դ) Նամաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացնել աջակցություն ցուցաբերելու մասին հայցի հիման վրա, ինչպես նաև փեղեկավորություն փրամադրելու միջոցով,

ե) որպես հայցվող Կողմ՝ ապահովել, որպեսզի Նայաստանի Նանրապետության իրավասու մարմինը հայցը կատարի հնարավորին չափ սեղմ ժամկետում, բայց առավելագույնը՝ հայցը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում՝ բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման մասին հայցերի կատարման, եթե Կողմերի միջև այլ պայմանավորվածություն չկա, եւ այդ մասին փեղեկացնի հայցող Կողմի պետության իրավասու մարմնին,

զ) ապահովել, որպեսզի հայցվող Նայաստանի Նանրապետության իրավասու մարմնին անմիջապես ծանուցի հայցող Կողմի պետության իրավասու մարմնին հայցի կատարմանը խոչընդոտող կամ կատարումը զգալիորեն ուշացնող հանգամանքների մասին, իսկ եթե հայցի կատարումը հայցն ստացած մարմնի իրավասության մեջ չէ, ապա երաշխավորել, որ նա կփոխանցի հայցը Նայաստանի Նանրապետության մեկ այլ մարմնի, որն իրավասու է այն կատարելու, եւ այդ մասին անմիջապես կփեղեկացնի հայցող Կողմի իրավասու մարմնին,

է) ապահովել, որպեսզի հայցի կատարման ամբողջական կամ մասնակի մերժման կամ հետաձգման մասին հայցվող Նայաստանի Նանրապետության իրավասու մարմինը ծանուցի հայցող Կողմի պետության իրավասու մարմնին՝ նշելով մերժման կամ հետաձգման պարճառները,

ը) ապահովել Նամաձայնագրին համապատասխան ստացված փեղեկավորության եւ փաստաթղթերի պաշտպանությունն ու պահպանվածությունը,

թ) երաշխավորել, որ Նամաձայնագրի հիման վրա ստացված փեղեկավորությունը կամ հայցի կատարման արդյունքները, առանց դրանք փրամադրող Կողմի գրավոր համաձայնության, չեն օգտագործվի այլ նպատակներով, քան այն նպատակներն են, որոնց համար դրանք հայցվել կամ փրամադրվել են, իսկ փեղեկավորությունը եւ փաստաթղթերը, որոնք Նամաձայնագրի հիման վրա ստացվել է մյուս Կողմից, չփոխանցել երրորդ կողմի՝ առանց դրանք փրամադրած Կողմի նախնական գրավոր համաձայնության,

ժ) սույն Նամաձայնագրի իրագործման հետ կապված ծախսերն իրականացնել ինքնուրույն, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցված:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Նայասրանի Նանրապետությունը Նամաձայնագրի մյուս մասնակիցների հետ մեկտեղ Նամաձայնագրի 9-րդ հոդվածում սահմանված փեդեկավրության պաշտպանության ապահովման պարավորությունը շարունակելու է կրել նույնիսկ Նամաձայնագրի գործողության դադարեցումից կամ դրանից դուրս գալուց հետո:

6. Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ, իրականացնելով ՆՏ Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված լիազորությունները, Նայասրանի Նանրապետության կառավարությունը պարավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Նամաձայնագրով սրանձնած պարավորությունների հեփագա կատարման հուսալիությունն առավելագույնս ամրապնդելու նպատակով:

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը միաժամանակ նշում է, որ քննության առարկա Նամաձայնագրով սրանձնած պարավորությունների ընդհանուր բնույթը եւ, միաժամանակ, հրագենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարում միջազգային համագործակցության բնագավառում Նայասրանի Նանրապետության մասնակցությունը պահանջում են Նամաձայնագրի կատարման նկատմամբ վերահսկողության հստակ եւ անընդհար իրականացվող մեխանիզմ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2008 թվականի նոյեմբերի 14-ին Քիշնետում ստորագրված՝ Նրագենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում (կից

վերապահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

24 սեպտեմբերի 2013 թվականի
ՄՂՈ-1116